ԱԴԱՆԱՅԻ 1909 Թ. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

Ռ. Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

1908 թ. հուլիսին տեղի ունեցավ երիտթուրքական հեղափոխությունը, ավելի ճիշտ՝ վերնախավային հեղաշրջումը, որը մեծ հույսեր և պատրանքներ առաջացրեց Թուրքիայի բնակչության, այդ թվում՝ հայերի շրջանում։ Այն ընկալվեց որպես թուրքական դարավոր բռնակալության և դեսպոտիզմի, համիդյան շրջանի խժդժությունների և ազգահալած քաղաքականության վերջ։ Եվ իրոք, շահագործվող ու իրավազուրկ ազգաբնակչությանն ընդհանրապես, Թուրքիայի քրիստոնյա հպատակներին մասնավորապես, թվում էր, որ մոտ է իրենց իղձերի և ցանկությունների իրականացումը։ Տառապած և կեղեքված հայ ժողովուրդն իսկապես հավատաց երիտթուրքերի հռչակած եղբայրության, հավասարության ու ազատության լոզունգներին և հուսաց իրավիճակի փոփոխության՝ մի քանի ամիս գտնվելով երջանիկ անգիտության և միամիտ հավատի մեջ։ Ճիշտ է նկատել Հ. Դիբբոնսը, որ «ամբողջ կայսրության մեջ ոչ ոք այնպես սրտագին չողջունեց սահմանադրական ռեժիմի հաստատումը, ոչ ոք այնպիսի նվիրված աջակցություն երիտթուրքերին ցույց չի տվել, որպիսին արեցին հայերը»[1]։

Երիտթուրքերը ժողովրդին դեմոկրատական ազատությունների, ազգային հալածանքի վերացման, իրավահավասարության հաստատման բազմաթիվ խոստումներ տվեցին, սակայն դրանք կյանքում իրենց լուծումը չգտան, չիրականացվեցին։ Ավելին. այդ հեղափոխությունը չարթնացրեց ժողովրդի ստորին խավերի ինքնագիտակցությունը, «թշնամի էր օսմանյան կայսրության մեջ սկսվող պրոլետարական պայքարին»[2]։ Միաժամանակ, որդեգրելով և շարունակելով Աբդուլ Համիդի վայրագ, հայաջինջ քաղաքականությունը, հետապնդելով պանիսլամական և պանթուրքական նպատակներ, երիտթուրքերն իրենց առջև խնդիր էին դրել օսմանիզմի գաղափարախոսությունն օգտագործել հպատակ քրիստոնյա ժողովուրդների բռնի թուրքացման համար։ Ակադեմիկոս Ե. Տարլեն իրավացիորեն նշել է, որ երիտթուրքերն իշխանության գլուխ անցան այն հաստատ համոզմամբ, որ «ազգային հարցերը կլուծեն բոլոր ազգությունների ֆիզիկական ոչնչացմամբ, բացի թուրքերից և նրանցից, ովքեր կհամաձայնեն անհապաղ դառնալ թուրք»[3]։

Սահմանադրության նկատմամբ հայ ժողովրդի ունեցած հավատը խախտվեց 1909 թ. Ադանայի վիլայեթում կազմակերպված կոտորածներով, որն արդյունք էր երիտթուրքերի կողմից հայ ժողովրդի նկատմամբ ազգային ճնշման և հալածանքի քաղաքականության ուժեղացման։ Պատահական չէր, որ այս անգամ ջարդեր կազմակերպվեցին ոչ թե Արևմտյան Հայաստանում, ոչ թե Անատոլիայի հայաբնակ շրջաններում, այլ կոնկրետ Կիլիկիայում։ Սա ուներ իր օբյեկտիվ դրդապատճառները։

XX դ. սկզբին Ադանայի վիլայեթը համարվում էր Թուրքիայի համեմատաբար զարգացած շրջաններից մեկը։ XIX դ. վերջին օսմանյան կայսրությունում շարունակում էին տիրապետող մնալ ռազմաֆեոդալական հարաբերությունները։ Բուրժուական հարաբերությունների որոշակի ձևավորում և հաստատում, կապիտալիստական արտադրության աճ հիմնականում առկա էին Թուրքիայի եվրոպական մասում և ծովափնյա շրջաններում։ Այդ շրջաններից էր նաև Ադանայի վիլայեթը, որտեղ կապիտալիստական արտա-

---

1 Г. Гиббонс, Последние избиения в Армении, Пгр., 1916, с. 18.

2 *Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 17, էջ 268։*

3 Е. В. Тарле, Соч., т. 5, М., 1958, с. 199.

դրաեզանակն անհամեմատ ավելի արագ էր արմատավորվում, քան երկրի մնացած վայրերում[4]։

Վիլայեթի բնակչության ճնշող մեծամասնությունը կազմում էին հայերը։ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի 1912 թ. տվյալներով Ադանայի վիլայեթում և Մարաշի սանջակում ապրում էր 377.000 հայ, իսկ Ադանա քաղաքի 66.000 բնակիչներից 22.000-ը հայեր էին, որոնք կարևոր դեր էին կատարում նահանգի սոցիալ-տնտեսական զարգացման գործում։ Հայերն ակնառու նվաճումների էին հասել տնտեսական, մշակութային և հասարակական բնագավառներում։ Նրանք հիմնականում իրենց ձեռքին էին կենտրոնացրել ներքին շուկայում ծավալվող առևտուրը, արդյունաբերական փոքրիշատե խոշոր ձեռնարկությունները և գյուղատնտեսական ապրանքների արտադրությունը։ Կիլիկիահայ բուրժուազիան կարողանում էր իր արտադրանքը վաճառահանել նաև արտաքին շուկա։ Երկրամասի տնտեսական զարգացման զարկերակը փաստորեն գտնվում էր հայկական բուրժուազիայի ձեռքին։ Գերմանական դիվանագետ Ռոհրբախը գրել է. «Ոչ մի կասկած չկա, որ նրանք (հայերը—Ռ. Գ.) թե՛ իմացական և թե՛ նյութական տեսակետով ամենագործունյա տարրն են արևելյան բոլոր ժողովուրդների մեջ»[5]։ Նույն միտքն է արտահայտել նաև Ա. Տիրկովան, նշելով, որ Թուրքիայում առևտրական բոլոր գործերը վարում են հայերը, որ «Թուրքերը խելքի են եկել և ուրախ կլինեին մրցել նրանց հետ, բայց դրա համար նրանք չունեն ոչ փորձ, ոչ փող»։ Եվ ահա Կիլիկիայում այդ «գործունյա տարրի» արագ զարգացումը և տնտեսական անկախությունն ու ազդեցության մեծացումը չէին համապատասխանում թուրքական նոր վեր բարձրացող բուրժուազիայի և ազգայնամոլ թուրք ջարդարարների շահերին, որոնք էլ կազմակերպեցին ու իրականացրին Ադանայի հայերի 1909 թ. կոտորածները։

1890-ական թվականների ջարդերից Ադանայի վիլայեթը զերծ էր մնացել, իսկ Կիլիկիայի որոշ շրջաններ (ինչպես Զեյթունը) համառ դիմադրության շնորհիվ ջախջախել, հետ էին մղել թուրք հրոսակներին, փրկվել ֆիզիկապես և համեմատաբար ազատ մնացել ավեր ու թալանից, որով էլ հիմնականում բացատրվում է Կիլիկիայի հայության սոցիալ-տնտեսական զարգացման անհամեմատ ավելի բարձր մակարդակը, քան մնացած վիլայեթներում։ Կար նաև մեկ այլ հանգամանք. գարնան և ամռան ամիսներին Թուրքիայի տարբեր շրջաններից Ադանա էին գալիս 50.000 հայ մշակներ, որով Ադանայի վիլայեթը ամենախիտ բնակեցված հայաբնակ վայրերն էր դառնում։ Միով բանիվ՝ «Ատանայի մեջ կամփոփվեին ամենաստվար հայությունը իր տնտեսական ու հողագործական բարգավաճ կյանքով», ուստի այս անդամ գլխավոր հարվածը հասցվեց Ադանայի հայությանը, «քանի որ Ատանայի տրվելիք հարվածը Կիլիկիոյ սրտին տրված մահացու հարվածը պիտի ըլլար»[7]։

Աբդուլ Համիդը վաղուց էր ուշադրությունը կենտրոնացրել «վաճառաշահ ու ծաղկած»[8] Կիլիկիայի վրա։ Զեյթունի լեռնականների 1895 թ. հերոսամարտերի հիշողությունները դեռ շատ թարմ էին, և արյունոտ սուլթանը Ադանայի խաղաղ զարգացումը տեսնելով, Հալեպում հաստատեց զինվորական հատուկ հրամանատարություններ, որոնք ենթարկվում էին Յլդզին և որոնց խնդիրն էր Կիլիկիա գաղթեցնել մոտ 150.000 մահմեդականների՝ ի հակակշիռ այնտեղ հայերի թվական, տնտեսական և մշակութային գերազանցության[9]։

---

4 Ե. Թոփչյան, Երիտասարդ Թուրքիան, մաս 1-ին, Թիֆլիս, 1909, էջ 46։

5 Ջ. Ս. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965, էջ 62։

6 А. Тыркова, Старая Турция и младотурки, Пгр., 1916, с. 131.

7 Մուշեղ եպիսկոպոս Ներսիսյան, Ատանայի ջարդը և պատասխանատուները, Կահիրե, 1909, էջ 11։

8 Նույն տեղում, էջ 9։

9 Նույն տեղում, էջ 10։

Ադանայի վիլայեթում ջարդեր նախապատրաստվում էին դեռևս 1906—1907 թթ., որոնք կիրականանային, եթե չլիներ այդ տարիների նահանգապետ Բահրի փաշայի զուսպ և կշռադատված քաղաքականությունը։ Նա իր պաշտոնավարության տարիներին արգելեց արդեն այն ժամանակ իսկ ջարդի սպառնալիքով լեցուն, դեռ նոր խմորվող շարժումները։ Նա կառավարության առջև ժխտում էր այն բոլոր զրպարտությունները, որոնք վերաբերում էին հայերին և որոնց նպատակն էր աստիճանաբար գրգռել թուրքական մոլեռանդությունն ու նախապատրաստել ջարդերը[10]։

Երիտթուրքական հեղափոխությունից հետո նոր վարչակազմը պաշտոնանկ արեց Բահրի փաշային։ Նրան փոխարինեց համիդյան ոգով դաստիարակված, շարդարարական հակումներ ունեցող Ջևադ բեյը, իսկ նահանգի զորքերի հրամանատար նշանակվեց «լեռնական զեյթունցիների կողմից 1895 թվականին դաս ստացած»[11] Մուստաֆա Ռեմզի փաշան, որոնք անմիջականորեն կազմակերպեցին Ադանայի վիլայեթի կոտորածները՝ համաձայն ի վերուստ ստացած հրահանգների։

Սահմանադրության վերահաստատումից դժգոհ ուժերը սկսեցին Ադանայում բորբոքել կրոնամոլ թուրք հետադիմական տարրերին, ատելություն սերմանել հայերի և թուրքերի միջև, խորացնել ազգային թշնամանքը՝ գրգռելով «հյուրիեթից» դժգոհ ռեակցիոն տարրերին։

Ինչպես հայկական նախորդ ջարդերը, այնպես էլ Ադանայի կոտորածները, երկար ժամանակ նախապատրաստվում էին կառավարության կողմից։ «Պատմականորեն հաստատված ճշմարտություն մըն է, թե թուրք ամբոխը ինքնաբերաբար չի համարձակիր որևէ շարժում ընելու և ան հրապարակ կուգա հայերու դեմ երկու պարագաներու մեջ միայն։ Նախ պետք է հայ ժողովուրդը անզեն ըլլա և պաշտպանվելու միջոցներե զուրկ, հետո կառավարությունը ուղղակի պետք է թելադրե ու դողե զայն, որ իր ձախորդության պարագային ինքը իր բանակովը զորավիգ պիտի ըլլա իրեն»[12],—իրավացիորեն նկատել է Գ. Թագվորյանը։

Ադանայի հայության կոտորածների անմիջական իրագործումը դրված էր տեղական իշխանության, կոնկրետ Ջևադ բեյի վրա, որն «իր պաշտոնեն անցած օրեն իսկ... շարունակ խուլ հակասություն էր ցույց տված մեր ազգային-հարաբերական գործերուն հանդեպ, ամեն անգամ, որ առիթը ներկայացած էր»[13],—գրում է ականատես Մուշեղ եպիսկոպոսը և ավելացնում, որ տեղի էին ունենում այնպիսի իրադարձություններ, որոնք տեսնված չէին բռնապետական շրջանում։ Սահմանադրության հռչակումից 1,5 ամիս անց Ադանայում սկսվում է «խուլ կերպով ծայր տալ մեկ կողմեն հակասահմանադրական շարժումը և մյուս կողմեն հայերու հանդեպ ջարդի մը սպառնալիքը»[14]։ «Հայրենիք» շաբաթաթերթը դեռ հունվարին անդրադառնալով Կիլիկիայում խմորվող դեպքերին, նշել է, որ «կուսակալության կեդրոնը Ադանան... Արդուլ Գատերի (ջարդերի կազմակերպիչներից—Ռ. Գ.) և իր արբանյակներու շնորհիվ այսօր ճգնաժամային տենդոտ շրջանի մը մեջ կը տարուբերվի», որ «թուրք տարրը անհպելի հուր մը, մշտայրաց կրակ մը դարձած է այս ժամուս»[15]։ Եվ իրոք, 1908 թ. վերջին և 1909 թ. սկզբին հայ-թուրքական հարաբերություններն Ադանայում այն աստիճան էին սրվել, որ բոպե առ բոպե կարելի էր սպասել ջարդերի բռնկմանը։

Թուրքական շովինիզմը և մոլեռանդությունը գրգռելու, ընդհարումներ հրահրելու նպատակով ջարդի կազմակերպիչները 1909 թ. սկզբներին Ադանայի մզկիթներից մեկի դուռն ապականում են և հայտարարում, որ դա հայերի գործն է, որ հայերը պղծել են թուրքական մզկիթը[16]։ Ջարդարարները

10 Նույն տեղում, էջ 14։

11 Հ. Մ. Պողոսյան, Զեյթունի պատմությունը, Երևան, 1969, էջ 368։

12 Գ. Թագվորյան, Երաշանքի ու տագնապանքի տարիներ, Կահիրե, 1961. էջ 70։

13 Մուշեղ եպիսկոպոս Սերովբյան, նշվ. աշխ., էջ 34։

14 Նույն տեղում, էջ 11։

15 Հայրենիք, Բոստոն, 1909, № 1։

16 Վավերագրեր Կիլիկիո կաթողիկոսական դիվանի, Բեյրութ, 1929, էջ 74։

քաղաքում շփոթություն և հուզում տարածելու, կրքերը բորբոքելու նպատակով կեղծ լուրեր են տարածում, որ Հաճընի հայերը ապստամբություն են բարձրացրել, գրավել են զինանոցը և հարձակվելու են Ադանայի վրա, որտեղ, միանալով հայ ազգաբնակչությանը, ջարդելու են Թուրքերին։ Սպանելով մի թլպատված հայ երիտասարդի, ջարդը նախապատրաստողները նրան ներկայացնում են որպես մահմեդականի՝ սպանված հայերի ձեռքով, տարածելով նաև, թե քաղաքի այգիներում հայերը տանջամահ են արել մի թրքուհու, կոտորել 5 անձից բաղկացած ընտանիք[17]։ Այս և նմանօրինակ շատ ղեպքեր ոչ թե Ադանայի կոտորածների պատճառներն էին, այլ սոսկ առիթը դեպի հայերն ունեցած ատելության բռնկման՝ նախօրոք ծրագրված և իրականացված ջարդի կազմակերպիչների կողմից։

Ադանայի առաջին ջարդը սկսվեց 1909 թ. ապրիլի 1-ին, չորեքշաբթի կեսօրին, բայց դեռ վաղ առավոտյան «տակն ու վրա էր արված Թոսպաղը Գալեսի թաղը»[18]։ Իմանալով հայերի անհանգստության և երկյուղների մասին, նահանգապետ Ջևադ բեյն իր մոտ է կանչում քաղաքի հայության հոգևոր և աշխարհիկ հեղինակությունների, նրանց հորդորում իրենց ազգակիցներին համոզել բացելու հայկական խանութները, որից հետո խուժանը կցրվի։ Բայց Թուրքերը, որոնք վաղ առավոտից հավաքվել էին շուկայում (գլուխներին կապած ճերմակ փաթթոցներով, որպեսզի ընդհարման ժամանակ ճանաչեն միմյանց), մոլլաների առաջնորդությամբ հեղեղում են ողջ շուկան. հարձակվում այնտեղ գտնվող հայերի վրա և սկսում կոտորածը։ Թուրքերին են միանում նաև քրդերն ու չերքեզները, որոնք ջարդերի առաջին օրը «շուկաները թալանելով և կեղրոնեն դուրս թուրք թաղերուն մեջ բնակող կամ պանդոկներու մեջ մնացող քրիստոնյաները ջարդելով անցուցին»[19]։ Շուկայում հայերի հետ հաշվեհարդար տեսնելուց և խանութները կողոպտելուց հետո մուհեռանդ ամբոխը հարձակվում է Հաճընից, Մուշից, Խարբերդից, Տիգրանակերտից և Սեբաստիայից եկած հայ մշակներով լեցուն Տուզ խան, Հայդար օղլի խան, Վեզիր խան և բազմաթիվ այլ պանդոկների վրա։ Ջնայած որոշ վայրերում հայերը, հատկապես հաճընցիները, դիմում են հուսահատ և հոմառ դիմադրության, այնուամենայնիվ, կոտորածների հենց առաջին օրը միայն պանդոկներում «կատարյալ վայրագությամբ» սպանվում է ավելի քան 300 մարդ[20]։ Գիշերը ջարդարարները կատաղի գրոհ են ձեռնարկում հայկական թաղամասերի վրա։ «Հրազեններու անթիվ պայթյուններեն երկինքը կը գոռար և երկիրը կը սարսռեր, խառնակությունը ծայր աստիճանին հասած էր»[21], «երկու կողմերե հոացանաձգությունները կը որոտային... մինչ օգնության աղաղակները ավելի ևս սարսռեցնեին զմեզ»[22],—այսպիսի հուզիչ արտահայտություններով է նկարագրել Հ. Թեոդիանն այն դժնդակ օրերի արհավիրքը։ Առաջին օրվա ջարդից հետո սկսվում է հայկական թաղամասերի հրդեհումը։ Դեպքերի ականատեսը գրել է. «Գիշերվան մութը կը մոտենար բերելով իր հետ լռության սոսկումներ. զենքի ձայները կը դադրեր. դիակները շուկաներուն և փողոցներուն մեջ փռուած կը մնային։ Ավերիչ բոցերու լույսերով տեղ-տեղ թաղերը լուսավորված, դաշտերը կերևային, հրդեհը հառաջ կը խաղար ահռելի ճարճատումներով. սև մոխիրը կարծես դժոխքի խորերեն կելլար. Ատանա հրաբուխ վեսուվներով շրջապատված կերևար»[23]։

---

17 Հ. Թերզյան, Կիլիկիո աղետը, Կ. Պոլիս, 1912, էջ 27։

18 Նույն տեղում, էջ 29։

19 Նույն տեղում, էջ 32։

20 Նույն տեղում, էջ 34։

21 Նույն տեղում, էջ 35։

22 Նույն տեղում, էջ 41։

23 ՀԽՍՀ Պետական կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՀԽՍՀ ՊԿՊԱ) ֆ. 1, գ. 387, թ. 28։

Ապրիլի 2-ին, չկարողանալով դիմադրել բազմահազար ջարդարարներին, հայերն ապաստանում են քաղաքի կենտրոնում գտնվող եկեղեցիներում ու դպրոցներում։ Այդ օրերի սպանդը և ահավոր դեպքերն արտացոլվել են նաև ֆրանսիացի լրագրող, ազգությամբ հույն Ադոսսիդեսի «Հայերն ու երիտթուրքերը» գրքում, որտեղ հանդամանորեն շարադրված է կոտորածների ողջ ընթացքն իր քստմնելի մանրամասներով։ «Որոշ տեղերում,—գրում է նա,—հայերին սպանում էին խմբերով, 100—200 մարդ միասին՝ մի փոքրիկ տարածության վրա...»[24]։ Երեկոյան զինված խաժամուժը հարձակվում է եկեղեցիների վրա, որտեղ պատսպարվել էին հուսահատ կացության և մահվան սպասման մեջ գտնվող հայերը։ Հրդեհվում են եկեղեցիները, դպրոցները, շրջապատվում է ամերիկյան իգական վարժարանը, որտեղ ապաստանած հայ մանուկներին փրկում է ամերիկացի միսիոներ Ջեմբեբսը[25]։ Ադոսսիդեսի վկայությամբ քաղաքն այնպիսի մարդկանց ձեռքին էր, որոնց մեջ մարդկային ոչինչ այլևս չէր մնացել։ «Նրանք վազում են, խոցում, սպանում, մաս-մաս մորթում և հեռանում արյամբ և քրտինքով պատված, ոռնալով, ինչպես վայրի գազաններ»[26]։

Ապրիլի 3-ին կոտորածն է՛լ ավելի է սաստկանում[27]։ Կողոպտիչների և մարդասպանների նորանոր խմբեր Հալեպից ու Սեբաստիայից դիմում էին դեպի Աղանա, «որով խուժանը ծովածավալ համեմատություն մը առած էր»։ Նույն օրը հայերը Օսման բեյի միջոցով կուսակալ Ջևադ բեյին են հաղորդում իրենց լալահառաչ, աղեկտուր խնդրանքները՝ դադարեցնել իր վայրագությամբ, անգթությամբ և դաժանությամբ մինչ այդ չտեսնված կոտորածները, որից հետո «կառավարության կողմեն խումբ մը պաշտոնյաներ և զինվորներ եկան» և հանդարտեցրին թուրքերին՝ դադարեցնելով կոտորածները[28]։ «Զինվորները, որ ջարդեն առաջ իբր թե փոքրաթիվ խուժանը չէին կրցած զսպել, ջարդեն ետքը անոր տասնապատիկը ավելի եղող խուժանը զսպեցին կես ժամվա մեջ»[29],—նկատել է Հ. Թերզյանը և այստեղից եզրակացրել, որ ամեն ինչ տեղի էր ունենում կառավարության գիտությամբ։ Եվ իրոք, կոտորածների այդօրինակ մեկ հրամանով դադարեցումը ապացույցն էր այն բանի, որ դրանք «պատրաստված և կազմակերպված էին տեղական իշխանության գիտակցությամբ և հրամանով»[30]։

Հայերը չէին հավատում անսպասելի փրկությանը և միայն 2 օր անց սկսեցին վերադառնալ իրենց ավերված ու կողոպտված բնակարանները։ Երկյուղ կրելով նոր ջարդերի սպառնալիքից, Աղանայի հայության մի մասը բռնեց գաղթի ճամփան՝ փրկություն որոնելով Եգիպտոսում, Կիպրոսում, Մերսինում և այլուր, սակայն շուտով նահանգային իշխանությունն արգելեց այդ գաղթը, «կարծես նկատելով, որ երկրորդ ջարդին ենթարկվելիք մարդ մը չը պիտի մնա»[31]։

Կոտորածների հանկարծակի և միանգամից դադարեցումը կասկած հարուցեց հայերի մեջ, որն օրավուր աճում էր ջարդերի միջև ընկած ինն օրվա ընթացքում։ «Հանդարտության բուն պատճառը չէինք գիտեր,—գրում է դեպքերի ականատեսը,—պատճառը արդյոք կուսակալին ղրկած խնդրագի՞րն էր, եթե ոչ իսլամներուն ջարդե, կողոպուտե, հրդեհելե հոգնիվը, և կամ ավելի սաստիկ հարձակման համար ժամանակ շահիլ ուզելը։ Սակայն ինը օր ետքը

---

24 Геноцид армян в Османской империи. Сборник документов под редакцией М. Г. Нерсисяна, Ереван, 1982, с. 208.

25 Հ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 46։

26 Геноцид армян..., с. 208.

27 Հ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 50։

28 Հ. Աշճյան, Ատանայի եղեռնը և Գոնիայե հուշեր, Նյու-Յորք, 1956, էջ 19։

29 Հ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 55։

30 Հ. Պապիկյան, Ատանայի եղեռնը։ Տեղեկագիր Հակոբ Պապիկյանի օսմանյան երեսփոխան էդիրնեի, Կ. Պոլիս, 1912, էջ 27։

31 Հ. Աշճյան, նշվ. աշխ., էջ 23։

կրկնվող երկրորդ ջարդը մեզ բոլորս ալ համոզեց, թե հանդարտության բունպատճառը վերոհիշյալ երեքեն երրորդն էր»[32]։ Արդեն ապրիլի 9-ին իթթիհատի անդամ Իսմայիլ Սեֆան «Իթթիտալ» թերթում հանդես եկավ նոր ջարդեր սկսելու կոչով. «Այն, ինչ կատարվել է, դեռ ամենը չէ, դա բավարար չէ։ Մենք միայն ընդմիջում տվեցինք, բայց մենք դեռ կտեսնենք, թե ինչով կավարտվի այս ամենը»[33]։

1909 թ. ապրիլի 12-ին Ռումելիայից Ադանա են դալիս երիտթուրքական «ազատարար» բանակի 2 գունդ և կանգ առնում Կըշլա Մեյդանի կոչվող վայրում[34]։ Երեկոյան ժամը 10-ին թուրքերն օգնության աղաղակներով դիմում են ղորքին՝ «պաշտպանություն խնդրելով հայերի «հարձակումներից» և զինվորները, որոնք իթթիհատի Սալոնիկի կենտրոնից ստացել էին «ջարդին պակաս ձգածը լրացնելու» գաղտնի հրահանգը՝ անցնում են հարձակման[35]։ Ադոսսիդեսի վկայությամբ «ազատարար» բանակի զինվորները «քայլում են մարդասպանների և հրկիզողների առջևից»[36]։ Նշենք, որ ջարդերին մազաչափ անգամ չխանգարեց այն հանգամանքը, որ Մերսին էին գտնվում անգլիական, ֆրանսիական, ռուսական և իտալական 7 ռազմանավեր, որոնք դեսանտ էին իջեցրել և գրավել ափամերձ շրջանը[37]։

Ապրիլի 12-ի գի-երը զինվորների և բաշիբոզուկների խառնամբոխը հարձակվեց Մուշեղյան վարժարանի վրա, որտեղ պատսպարվածները փորձեցին փրկվել կրակե բոցերից և դուրս եկան հրկիզվող շենքից, սակայն գնդակահարվեցին, իսկ շատերն այրվեցին բոցերի մեջ։ Այս անգամ հայկական թաղամասերի հրկիզողներն էին նոր ժամանած զինվորները, որոնք «վրեժի միայն այդ միջոցն էին գտել, որովհետև թուրք և քուրդ խուժանը մինչ այդ ամեն բան թալանել էր»[33]։

Կոտորածների մասշտաբով, սպանդի դաժանությամբ, ավարի և կողոպուտի սաստկությամբ Ադանայի վիլայեթի կոտորածների երկրորդ փուլը ավելի ահավոր և սահմռկեցուցիչ էր։ «Առաջին ջարդի միջոցին Ատանայի շրջակա գյուղերուն մեջ գտնվող հայերը և Ատանայի կեդրոնը քիչ կորուստ ունեցավ, մինչդեռ երկրորդ ջարդը կործանեց Ատանան»[39]։ Կ. Պոլսի ռուսական դեսպան Զինովևի՝ Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրությանն ուղղված հաղորդագրության համաձայն դեռ «ոչ վաղուց ծաղկող Ադանա քաղաքի երեք չորրորդն ավերված է»[40]։ Միայն Ադանայում ջարդերին զոհ գնաց 18.627 մարդ[41]։

Ադանայի կոտորածներին զուգընթաց, ջարդեր տեղի ունեցան նաև վիլայեթի հայաբնակ այլ վայրերում։ Ապրիլի 1-ին հուզումներ սկսվեցին Տարսուսում։ Հրդեհվում են հայկական թաղամասերը և 4000—5000 անօթևան հայեր ապաստանում են տեղի ամերիկյան վարժարանում։ Հրո ճարակ դարձավ ավելի քան 600 տուն[42]։ Միայն քաղաքում սրի քաշվեց 96 հայ[43], իսկ ողջ շրջանում՝ մոտ 560, որից 160-ը ամբողջովին ավերված Գոզ-Օլուգ գյու-

---

32 Նույն տեղում, էջ 20։

33 Геноцид армян..., с. 210.

34 G. Bresol, Les Turks ont passe lá . . . , Paris, 1911, p. 101—102

35 Ջ. Ս. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, հ. 1, Երևան, 1982, էջ 267։

36 Геноцид армян..., с. 211.

37 Հ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 61։

38 Գործ, Թիֆլիս, 28. IV. 1909։

39 Հ. Թերզյան, նշվ., աշխ., էջ 59։

40 Архив внешней политики России (далее-АВПР), ф. Канцелярия МИД, 1909, д. 38, т. I, л. 274.

41 Հ. Մ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 367։

42 Геноцид армян..., с. 214.

43 Ferman DuCkette, Turkish Atrocites. The Young Turks and tie Truth about Holocaust at Adana in Asia Minor, During 1909, 1913, p. 51.

ղում[44]։ Տարսուսից ջարդերը տարածվում են դեպի Ապտոզլու, որը թուրք ավարառուները շրջապատում են ապրիլի 3-ին։ Կրակի են մատնվում գյուղի բոլոր 130 տները, ամենայն դաժանությամբ մորթվում են 600 հոգի[45]։ Ահավոր բարբարոսություններ տեղի ունեցան հատկապես Միսիսում (Մամեստիայում), որտեղ կենդանի մնացին միայն 80 կին և տղամարդ՝ նեբառյալ ծծկեր երեխաները[46], Գետնին են հավասարեցվում Ինջիրլիկի 145 հայկական տները։ 700 բնակիչներից կենդանի են մնում ընդամենը 60 հոգի[47]։

Ապրիլի 1-ին կոտորածներ են տեղի ունենում նաև Օսմանիեում, որտեղ «գործված վայրագությունները Կիլիկիո եղեռնին գլուխգործոցն է»— ցավով նշել է Հ. Թերզյանը։ Փրկում է այրվող եկեղեցին և 500 հայեր մնում են փլատակների տակ։ Գազանաբար հոշոտվում են մոտ 1500 հոգի[48]։ Գըրբգ-Պայասում տեղական բանտից ազատ արձակվեցին «500 բանտարկյալներ, որոնք չհապաղեցին մասնակցել վայրագություններին»[49]։

Սպանություններ և վայրագություններ են կատարվում նաև Մերսինում, որտեղ ռուսական «Ուրալեց» ռազմանավի նավապետ Կուզնեցովն իր նավն է ընդունում ջարդերից մազապուրծ 3 տղամարդու և 62 կանանց ու երեխաների, փրկում նրանց մահվան սպառնալիքից, տեղափոխում Ալեքսանդրեթ և ապահովում սննդով[50]։

Ավերածությունների, թալանի ու կոտորածների ենթարկվեցին նաև Հասան Բեյլին, Լափաշլուն, Լաթաքիան, Այասը, Այնթապը, Անտիոքը և այլն[51]։

Ադանայի կոտորածների պատմության ուսումնասիրման գործում առանձնահատուկ տեղ պետք է հատկացնել հայերի օրհասական-հերոսական ինքնապաշտպանությանը, որը տեղ-տեղ պսակվում էր լիակատար հաղթանակով։ Դիմադրություն կազմակերպվեց ինչպես Ադանայում, այնպես էլ վիլայեթի այլ բնակավայրերում։ «Երբ հասկացանք, որ լաց, ողբ, աղաչանք, պաղատանք և անձնատուր ըլլալ օգուտ չունի, և տեսնելով, որ կառավարությունն ալ զինվորներով ու ոստիկաններով խուժանին միացած է, ստիպվեցանք ճգնաժամային բուռն դիմադրության մը դիմել, որ եթե քիչ մ՝ալ ուշացնեինք՝ անկասելի ամբողջությամբ ոչնչացած պիտի ըլլայինք»[52],— գրել է Հ. Թերզյանը։

Հայերն Ադանայի 3 թաղերում ինքնապաշտպանություն են կազմակերպում և այնքան հաջող, որ որոշ տեղերում դիմանում են 24—48 ժամ՝ «շատ անգամ ետ մղելով հարձակվողների գրոհները՝ նրանց մեծ վնասներ հասցնելով»[53]։ Տեղ-տեղ մի քանի հոգու հաջողվում էր հաղթել մի ամբողջ ավազակախմբի, իսկ ոմանք նույնիսկ համարձակ արտագրոհի էին դիմում, «որպեսզի օգնություն ցույց տան առանձին հայկական տներին»[54]։ Ընդ որում, «զինված էին միայն մոտ 100-ի չափ հայերս», որոնք համառորեն կռվում էին «ահագին խուժանի և նրան միացած զորքի դեմ»[55]։

Կիլիկիայի մի շարք շրջաններում ևս հայերը կարողացան դիմել կազմակերպված ինքնապաշտպանության։ Թուրք հրոսակները բուռն դիմադրության են հանդիպում Դյորթ-Յոլի (Չոք-Մարզվան) հայերի կողմից։ Շրջապատված լինելով բազմահազար ռեդիֆներով (պահեստի զինվոր) և բաշի-

44 Հ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 166։
45 Նույն տեղում, էջ 183։
46 Геноцид армян..., с. 217.
47 Նույն տեղում, էջ 214։
48 Հ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 199—202։
49 АВПР, ф. Канцелярия МИД, 1909, д. 35, л. 19.
50 Նույն տեղում, թ. 23։
51 ՀԽՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1828, թ. 5։
52 Հ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 36։
53 Геноцид армян..., с. 207.
54 Նույն տեղում։
55 Գործ, 28. IV. 1909։

բողուկներով, հայերը շտապ պատրաստում են 150 պաշտպանական կետեր և իրենց ուժերը բաշխում դրանց վրա։ Պատրաստվել էր արհեստանոց, որտեղ օր ու գիշեր աշխատում էին 100 հոգի և հայ մարտիկներին ապահովում մարտական անհրաժեշտ հումքով[56]։ Տեսնելով, որ ամրոց-բնակավայրը համառորեն պաշտպանվում է և ծանր հարվածներ հասցնում, թուրքերը 2՝ օր անց թնդանոթներ են բերում, գրավում գյուղի մի մասը, կտրում խմելու ջուրը, սակայն չեն կարողանում կոտրել հայերի պաշտպանողական կամքը[57]։ Սարավ մնալով ավելի քան մեկ շաբաթ, հայ քաջորդիները «գիշեր ցերեկ թշնամյաց գնդակներուն կը դիմադրեին պահպանելու համար ժողովրդական կեանքն ու պատիվը՝ օրհասի մը երկունքով»[58]։ Օժանդակ ուժեր ստանալով՝ թուրքերը պատրաստվում են նոր, ավելի ուժեղ հարձակման, իսկ հայերը՝ օրհասական դիմադրության։ Առաջին օրերի սարսափից հետո տղամարդկանց են միանում մոտ 100 երիտասարդ կանայք և աղջիկներ՝ զինված դերանդիներով ու նիզակներով։ Պատրաստվեց 3000 նիզակ, որով ինթաղրվում էր զինել անզեն կանանց և պատանիներին[59]։ Բայց պաշտպանության 13-րդ օրը օտարերկրյա հյուպատոսների և միսիոներների միջամտության շնորհիվ Դյորթ-Յոլի պաշարումը դադարեցվեց։

Համառ դիմադրությամբ աչքի են ընկնում նաև Սիս քաղաքի հայերը, որոնք ապրիլի 2-ից մինչև 6-ը Թուրսարգսյանի և Գյուտ վարժապետի ղեկավարությամբ հետ են մղում թուրքերի բոլոր գրոհները[60]։

Անօրինակ, խիզախ պաշտպանությամբ կոտորածից փրկվում է 45 տուն և 200 բնակիչ ունեցող Շեյխ-Մուրադը՝ «շնորհիվ որոշ անհատների հերոսական ջանքերի»[61]։ Որսորդական հրացաններով զինված 3 քաջեր ողջ բնակչությանը հավաքելով գյուղի կենտրոնում, «գրավելով կարևոր կետերը... այնպիսի արագությամբ էին կրակում, որ հարձակվողները վստահ էին պաշտպանվողների գգալի ուժերի մեջ»[62]։ Ուրբաթ և շաբաթ օրերին հայերը բազմիցս հետ են մղում թուրքերի գրոհները։ Ջարդարարներին վախեցնելու համար պաշտպանները դիմում են խորամանկության. ջրի խողովակի մի անցքը փակում են, մյուսի մեջ վառոդ լցնում և պայթեցնում, որից հետո թուրքերը զգուշանում են, կարծելով, թե հայերը զինված են նաև թնդանոթներով։ Պաշարման 5-րդ օրը հայերը ճեղքում են շրջապատման օղակը, անցնում Ադանա և ապաստանում Մուշեղյան վարժարանում[63]։ Կոտորածներից փրկվելու համար Բախչեի հայերը բարձրանում են սարերը, սակայն «նրանց ետևից 20 օրվա ընթացքում իսկական որս էր շարունակվում»[64]։ Ֆրանսիական հյուպատոսը հիշում է, որ Համիդիեն ավերումից 15 օր անց «իրենից ճակատամարտի դաշտ էր ներկայացնում»[65]։ Համառ դիմադրություն են ցույց տալիս նաև Հաճընի հայերը, որոնք բազմիցս հետ են մղում իրենց թաղերը գրոհող թուրքական գերակշիռ ուժերին։ Իրադարձությունների մասնակիցը և դեպքերի ականատեսը գրում է. «Հաճընի ճակատամարտին մեջ ամենամեծ անձնվիրություն ցույց տվավ ամերիկուհի միս Ռոզ Լեմպերթ, որուն կողմե Մերսինի անգլիական հյուպատոսին գրված ամենաբիտ հեռագիրներուն շնորհիվ էր, որ Հաճընը ազատեցավ»[66]։

---

56 Геноцид армян..., с. 200.

57 Հ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 223։

58 ՀԽՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1850, թ. 16։

59 Геноцид армян..., с. 200.

60 Է. Ոսկերչյան, Կիլիկյան հուշեր, Հալեպ, 1930, էջ 28։

61 Геноцид армян..., с. 199.

62 Նույն տեղում։

63 Հ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 220։

64 Геноцид армян..., с. 199.

65 Նույն տեղում։

66 Հ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 240։

Դաժան ընդհարումներից հետո Թուրքերին հաջողվում է գրավել Հասան-Բեյլին ու Շարդերը, սակայն նրանք չեն կարողանում ոչնչացնել բնակիչներին, որովհետև վերջիններս «ինքնապաշտպանական համառ մարտերից հետո կազմակերպված հեռացել էին»[67]։

Որոշ հուզումներ են լինում Մաբաշում, սակայն դրանք կարճ ժամանակում դադարում են, խաղաղությունը վերահաստատվում է մասնավորապես այն բանից հետո, երբ Թուրքերին տեղեկություններ են հասնում, որ քաղաքում շարդեր կազմակերպելու դեպքում Զեյթունի քաջամարտիկ լեռնականները շարժվելու են դեպի Մարաշ։ Մարաշցի տ. Սահակ քահանա Պետրոսյանի հեռագիրը՝ ուղղված զեյթունցիներին, վկայում է, որ «եթե Զեյթունի անունը ու սարսափը չըլլար կարելի չէր, որ Մարաշի մեջ հայ մնար»[68]։

Դժվար է գերագնահատել ինքնապաշտպանության դերն ու նշանակությունը. «Կարելի է վստահ լինել, որ... առանց հայերի ինքնապաշտպանության իրադարձությունները շատ ավելի ծանր ընթացք կստանային»[69]։ Ադանայի վիլայեթի ինքնապաշտպանական մարտերը հայ ժողովրդի հերոսական պատմության կենաց ու մահու մաքառման դրվագներից են։

Ադանայի կոտորածներն իրենց ձևերով, իրագործման վայրենի եղանակներով, ահավոր մեթոդներով ցնցեցին ողջ աշխարհը։ Ե՛վ կանայք, և՛ երեխաները, և՛ ծերերն ու հիվանդները «առկա եղած են ամենադժգոհի վարմունքներու»[70]։ Օսմանյան պառլամենտին ուղղված ապրիլի 6-ի հեռագրում Ադանայի հոգևորականները նշում էին, որ հայերը ենթարկվեցին «այնպիսի անգթություններու և հալածանքներու, որոնք տեղի ունեցած չէին Ճենգիզ խանի և Թիմուրլենկի ժամանակները»[71]։ Ականատեսներից մեկը գրել է. «Որոշ զոհեր ենթարկվում են մի ամբողջ շարք այնպիսի կատարյալ ձևով արվող տանջանքների, որպեսզի ավելի երկար շարունակվի տանջամահ արվողի կյանքը և երկարի իրենց (Թուրքերի—Ռ. Գ.) բավականությունը. նրանց (հայերին—Ռ. Գ.) խեղում են, եղունգները հանելով ջարդում մատները, մարմինները դաջում այրված երկաթով, հանում գանգամաշկերը, ի վերջո մարդուն վերածում են շիլայի, որը շպրտում են շներին որպես կեր»[72]։

Ադանայի կոտորածներից անմիջապես հետո թուրքական կառավարությունն աշխատեց կեղծել փաստերը և ջարդերի հեղինակներ ներկայացնել հայերին, տուժողներ՝ Թուրքերին։ Այսպես, Ադանայի նոր կուսակալ Մուստաֆա Զիհնի փաշան 1909 թ. մայիսի 1-ին Կ. Պոլիս ուղարկած հեռագրով հաղորդում է, որ սպանված «իսլամներու թիվը 1924 և վիրավորյալներու թիվը 533 է»[73], իսկ «հայերե սպանվածներու թիվը 1455 և վիրավորյալներունը 383 է»[74]։ Բայց, իրականում, ջարդարարների «դժոխային ու ազգամոլական ծրագրին, որուն նպատակն էր Կիլիկյան հայության ուժն ու հարստությունը, ազդեցությունն ու դիրքը կործանելը»[75], զոհ գնաց ավելի քան 30.000 մարդ[76], իսկ համաձայն որոշ թերթերում հրապարակված հաղորդագրությունների՝ զոհերի թիվը կազմում էր մոտավորապես 35.000[77]։

---

67 Ա. Ս. Հ ա մ բ ա ր յ ա ն, Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1979, էջ 33։

68 Զեյթունի հոգևոր առաջնորդ Վ. Արջակունու հուշերը (ձեռագիր), էջ 29 (պահվում է պատմաբան Հ. Մ. Պողոսյանի անձնական արխիվում)։

69 Геноцид армян..., с. 199.

70 Հ. Պ ա պ ի կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 15։

71 Հ. Ա շ ճ յ ա ն, նշվ. աշխ., էջ 21։

72 Геноцид армян..., с. 209.

73 Հ. Ա շ ճ յ ա ն, նշվ. աշխ., էջ 90։

74 Նույն տեղում։

75 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Զանազան հեղինակների արխիվ, թղթ. № 14, վավ. № 521։

76 Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիո, Անթիլիաս-Լիբանան, 1939, էջ 909։

77 Геноцид армян..., с. 196.

Ադանայի կոտորածների կազմակերպման և կազմակերպիչների վերաբերյալ պատմագրության մեջ կան տարբեր կարծիքներ՝ մեղադրող և՛ երիտթուրքերին, և՛ Արդուլ Համիդին։ Այս տարակարծիքներն առկա են նաև ժամանակակիցների ու ականատեսների հուշերում։ Նշենք, որ նրանց մեծ մասն Արդուլ Համիդին և նրա պաշտոնյաներին Ադանայի կոտորածների կազմակերպիչներ էին համարում նախ և առաջ այն պատճառով, որ դեռևս պատրանքներ էին տածում երիտթուրքական հեղափոխության նկատմամբ ու դժվար էր հավատալ նրանց մեղավորությանը։ Բացի այդ, ջարդի օրերին սուլթանի կողմնակիցները հակասահմանադրական, հետադիմական շարժում բարձրացնելով գրավել էին մայրաքաղաքը և զավթել իշխանությունը։ Սակայն չմոռանանք, որ Ադանայում և Թուրքիայի մնացած նահանգներում փաստական իշխանությունը գտնվում էր երիտթուրքերի ձեռքին։

Ինչպես կոտորածների ընթացքի, այնպես էլ կազմակերպիչների հարցը առաջինը քննարկել է թե՛ հայ, և թե՛ արտասահմանյան մամուլը, սակայն հարկ է նշել, որ մամուլում տպագրված ոչ բոլոր հաղորդագրություններին և հոդվածներին պետք է հավատ ընծայել, քանզի գրանցում արտացոլվել են ժամանակի շունչը, ոգին և տատանումները։ Այսպես, 1909 թ. Թիֆլիսի «Գործ»-ի տարբեր համարներում, ըստ ստացված տեղեկությունների, Ադանայի կոտորածների կազմակերպիչների վերաբերյալ կան իրար հակասող և հերքող հոդվածներ։ Օրաթերթի մի համարում Ադանայի կոտորածները համարվում են Կ. Պոլսում հաղթանակած ռեակցիայի շնորհիվ ոգևորված և գլուխ բարձրացրած «մութ ու ոճրական ուժերի գործը»[78], իսկ մյուսում նշված է, որ «բռնակալական շրջանի ամենատիպիկ ներկայացուցիչները, կամայականության, սանձարձակության ամենաեռանդուն գործիչները՝ վալիներից, մյութեսարիֆներից սկսած մինչև ամենահետին գայմագամը, մյուդիրն ու զապթիան-իթթիհատական են դարձած»[79], որից էլ կարելի է եզրակացնել, թե բոլոր պաշտոնյաները, փաստորեն, «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամներ են, որքանով Ադանայի կոտորածները կազմակերպվել են կենտրոնական կառավարության ցուցումներով ու տեղական իշխանության ղեկավարությամբ։ Ադանայի սպանդը երիտթուրքերի պանիսլամական քաղաքականության անկյունաքարն էր, որի հիմքը դրվեց 1909 թ. ապրիլին։ Նույն թերթի մեկ այլ համարում տպագրված հաղորդագրության հեղինակը պնդում է, թե հնարավոր չէր Ադանայի մասին ստանալ ճիշտ տվյալներ, քանի որ նահանգային վարչությունը «գրաքննություն էր հաստատած այնտեղից ուղարկվող հեռագիրների վրա» և «միայն այժմ կարելի է լինում ստանալ այդ տեղեկությունները։ Բոլոր տեղեկությունները ցույց են տալիս, որ ընդհարումն առաջացրել են Համիդի և ռեակցիայի գործակալները»[80]։

Ինչ խոսք, որ այդպիսի հաստատ համոզմունքով հրապարակված հաղորդագրությունն անհրաժեշտ է վերապահորեն ընդունել, որովհետև երիտթուրքերը Համիդի գահընկեցությունից և Ադանայի կոտորածներից հետո, բնական է, պետք է աշխատեին պատասխանատվության իրենց բաժինն էլ գցել տապալված սուլթանի ու նրա ռեժիմի վրա և հենց սա էլ արտացոլվել է մամուլում։ Իրավացի է կոտորածների ականատես Հ. Աշճյանը, երբ գրում է, որ «Ադանայի ջարդը տեղական ու պատահական դեպք մը չէր, այլ օսմանյան կառավարության գլխավոր վարիչներուն կողմեն ծրագրված ու գործադրված կարգադրություն մըն էր»[81]։ Նա կազմակերպված ջարդերի պատասխանատու է համարում թուրքական կառավարությանն ընդհանրապես, մատնանշելով նաև երիտթուրքերի մասնակցությունն այդ գործին. «Ադանայի ջարդեն անմիջապես ետքը,—գրում է նա,—տեղական կառավարությունն ու Միություն և Առաջադիմություն կուսակցությունը տեսան թե խըն-

78 Գործ, 10. IV. 1909։

79 Նույն տեղում, 18. IV. 1909։

80 Նույն տեղում, 28. IV. 1909։

81 Հ. Աշճյան, նշվ. աշխ., էջ 9։

դիրը ծանր և սխալ է, աշխատեցան պատասխանատվությունը իրենց վրայեն ձգել»[82], մեղքը բարդելով հայերի վրա, որոնք, իբր թե, ցանկանում էին վերականգնել բռնապետական հին կարգերը։

Որ երիտթուրքերն իսկապես հանդիսացել են կոտորածների անմիջական կազմակերպիչները և հրահրողները, պարզորոշ երևում է «Միություն և առաջադիմություն» կոմիտեի՝ Ադանայի մասնաճյուղի շրջակա 18 բնակավայրերը հղած նույն բովանդակությամբ հեռագրից. «Կեռվտերելյան 300 հայ դինյալ ֆեդայիներով ձեր գյուղին վրա հարձակում պիտի գործե և տեղացի հայերուն միանալով՝ ջարդ պիտի ընե։ Դեռ անոնք չեկած՝ դուք պետք եղածը ըրեք»[83]։

Ընդունելով հանդերձ, որ ջարդը կազմակերպվել էր նաև հին վարչակարգի պաշտոնյաների, Աբդուլ Համիդի արբանյակների կողմից, հարկ է միաժամանակ նշել, որ երբ թուրք խուժանն ու ռեակցիոն ուժերը սկսեցին հակասահմանադրական շարժումը և առաջին հերթին հայերի հալածանքն ու կոտորածը՝ նրանց անմիջապես միացան նաև երիտթուրքական զորքերն իրենց պարագլուխների հետ։ Նրանցից 2000 հոգի, որոնք Ադանա էին ուղարկվել «բարեկարգությունը վերահաստատելու համար», տեղ հասնելուն պես «անմիջապես... ջարդին ու ավարառության մասնակցեցան»[84]։ Կոտորածները երիտթուրքերի կողմից կազմակերպվելն է վկայում նաև հյուպատոսներից մեկն իր հեռագրում. «Ինչպես երևցավ մինչ ցարդ գլխավոր վայրերուն մեջ, այս գոմիթեին («Միության և առաջադիմության»—Ռ. Գ.) անդամները գործոն դեր մը առած են աղետին կազմակերպության մեջ»[85]։

Երիտթուրքերի մեղսակցության գուցե ամենամեծ վկայությունն օսմանյան պառլամենտի անդամ, երիտթուրքական կուսակցության անդամ Հակոբ Պապիկյանի «Տեղեկագիրն» է Ադանայի կոտորածների վերաբերյալ։ Այդ խիստ անաչառ, արդարացի և անհերքելի փաստերի հիման վրա գրված փաստաթուղթը մեղադրում է ինչպես հին վարչակարգին, այնպես էլ երիտթուրքերին, որի համար էլ Հ. Պապիկյանը կյանքով հատուցեց։ Մերկացնելով հին վարչակարգի պաշտոնյաներին, որոնք մտածում էին, թե «նոր ռեժիմին դեմ հաջողությամբ հարձակելու համար նախ պետք է հայերը բնաջնջել»[86], քանզի հայերն իրոք նվիրված էին սահմանադրությանը, Հ. Պապիկյանը ցույց է տալիս նաև երիտթուրքերի մասնակցությունը կոտորածների կազմակերպման գործում։ «Վերջացնելե առաջ,—գրում է նա,—ստիպված եմ ամենախոր ցավով ավելցնելու, որ Իթթիհատ վե թերաքքը կուսակցության անդամները Ադանայի վայրագ եղերգության կազմակերպման և գործադրության մասնակցած են»[87]։ Որ կոտորածները կազմակերպվել և իրականացվել են երիտթուրքերի կառավարության կողմից՝ հաստատվում է նաև իթթիհատի ազդեցիկ անդամ Մևլանզադե Ռիֆաթի վկայությամբ, ըստ որի այն ժամանակ, երբ Կ. Պոլսում սկսվել էր համիդյան հեղաշրջումը, երիտթուրքերի «Ատանայի մասնաճյուղը կեդրոնեն ստացած հրահանգին համաձայն, Կիլիկիո, մասնավորապես Ատանայի մեջ ընդհանուր ջարդ մը պատրաստելու սկսած էր»[88]։

Ադանայի հայության կոտորածների վրա բևեռվեց հայ և թուրք հասարակական-քաղաքական մտքի, մտավորականության, ժողովրդական լայն զանգվածների ուշադրությունը, երիտթուրքերի վայրագության դեմ բարձրացավ համայն աշխարհի առաջադեմ մարդկության բողոքի ձայնը։ Այս հարցին անդրադարձած եվրոպական պատմաբանների մեծ մասն իրավացիորեն

---

82 Նույն տեղում, էջ 114։

83 Նույն տեղում, էջ 150։

84 Հ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 637։

85 Նույն տեղում, էջ 683։

86 Հ. Պապիկյան, նշվ. աշխ., էջ 42։

87 Նույն տեղում։

88 Մևլանզադե Ռիֆաթ, Իթթիհատի հայաջնջ ծրագրերը և թուրքական հեղափոխության մութ ծալքերը, Բեյրութ, 1938, էջ 141։

Կարծում է, որ սահմանադրական կարգերի հանդեպ հայերի հավատարմությանը երիտթուրքերը պատասխանեցին «Ադանայի կոտորածով՝ որով սկիզբ դրվեց պատմության մեջ երբևէ գրանցված ամենասարսափելի ջարդերի շարքին»[89]։

Այսպիսով, արխիվային վավերագրերը, ժամանակի մամուլը, ժամանակակիցների հուշերը, հայ և օտար պատմաբանների աշխատությունները անվերկբայորեն ապացուցում են, որ Ադանայի կոտորածները կազմակերպվել և ղեկավարվել են երիտթուրքերի կողմից՝ մասնակցությամբ նաև հին վարչակարգի պաշտոնյաների։ Հայաջինջ ծրագրերի իրականացման գործում «Միություն և առաջադիմություն» կուսակցության ձգտումները համընկնում են համիդյան ռեժիմի պաշտոնյաների նպատակների հետ։

РЕЗНЯ АРМЯН В АДАНЕ В 1909 Г.

Р. Г. ГАСПАРЯН

Резюме

Младотурецкая революция июля 1908 года была воспринята как завершение векового турецкого ига, деспотизма и злодеяний гамидского периода. Многострадальный и угнетенный армянский народ и впрямь поверил в провозглашенные младотурками лозунги братства, равноправия, свободы. Однако младотурки продолжили жестокую политику Абдул Гамида, преследуя пантюркистские и панисламистские цели, организовали и осуществили аданскую резню. Резня и грабежи имели место как в Адане, так и в Тарсусе, Аптоглу, Мисисе, Османье, Паясе, Мерсине, Латакии, Антиоке, Айнтапе, Айасе и в других местах. Одновременно в ряде населенных мест Киликии армяне организовывают сильное сопротивление. Оборонительные бои вилайета Аданы являются историческим эпизодом героической борьбы армянского народа за жизнь и самосохранение.

ARMENIANS' MASSACRE OF ADANA IN 1909

R. G. GASPARIAN

Summary

The Young-Turks revolution of June 1903 was hailed as the termination of the century-long Turkish yoke, despotic rule and autrocities of the Hamid period. The long-suffering and suppressed Armenian people did in actual fact believe the slogans proclaimed by the Young Turks of brotherhood, equal rights and freedom. However, the young Turks continued to pursue the cruel policy of Abdul-Hamid, persuing the pan-Turkish and pan-Islamic goals, organizing and carrying out the Adan massacre. The massacre and looting took place both in Adana and in Tarsmus, Aptoglu, Misis, Osmania, Paias, Mersina, Latakia, Antiokh, Aintap, Aias and at other places. Simultaneously in a number of population centres of Cilicia the Armenians organized a powerful resistance. The defensive combats of the Adana Vilajet were historic occasions of heroic struggle of the Armenian people for survival and self-preservation.

---

[89] G. Morgan, The History of the Armenian People, Boston, p. 306.